



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ

2025թ. հոկտեմբերի 23 -ին, N 353 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ  
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՄԱՍԸ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածի դրույթներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով և հիմք ընդունելով Ա. Գրիգորյանի 2025 թվականի հոկտեմբերի 20-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Արմեն Գրիգորյանին տրամադրել ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը՝ 2024 թվականի հունվարի 19-ից 2025 թվականի հունվարի 19-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 10 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 5-ը ներառյալ:

2. Արմեն Գրիգորյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել մարզպետի տեղակալ Միլադա Հովհաննիսյանի վրա:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 10/23/2025 13:44:03 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457



ԱՄԻՍՅԱՆ